ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3/4.3-24

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2024թ. մարտի 11-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելված N2-ի 4.3 կետով նախատեսված **«Զբոսաշրջության կրթության բարելավում»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ս.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝ Հանձնաժողովի նախագահ
Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ
Ս.Ասլիզադյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Ա.Սողբաթյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության գլխավոր մասնագետի պաշտոնակատար
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Լ.Պետրոսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը՝

1. «Մատենա» առաջնորդության և մասնագիտական զարգացման միջազգային դպրոց» փակ բաժնետիրական ընկերության խնդրանքին՝ Լա Ռոշ Մարբելա համալսարանում կատարված կրթական ծրագրի փոփոխությանը, համաձայնություն տալու, մասնավորապես՝ «Առաջնորդության և տաղանդների կառավարում» հետբուհական կրթական ծրագիրը «Հյուրընկալության կառավարում» հետբուհական կրթական ծրագրով փոխարինելու մասին:

Լսեցին՝

1. Հանձնաժողովին ներկայացվեց «Մատենա» առաջնորդության և մասնագիտական զարգացման միջազգային դպրոց» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2024 թվականի փետրվարի 27-ի Զբոսաշրջության կոմիտեին ուղղված գրությունը, որով ընկերությունը տեղեկացնում է, որ Լա Ռոշ Մարբելա համալսարանում կատարվել է կրթական ծրագրի փոփոխություն, որի մասին համալսարանը պաշտոնական գրությամբ տեղեկացրել է (կցվում է): Համաձայն գրության՝ «Առաջնորդության և տաղանդների կառավարում» հետբուհական կրթական ծրագիրը փոխարինվել է «Հյուրընկալության կառավարում» հետբուհական կրթական ծրագրով:

Նշվեց նաև՝ հիմք ընդունելով վերը նշված գրությունը, «Մատենա» առաջնորդության և մասնագիտական զարգացման միջազգային դպրոց» փակ բաժնետիրական ընկերությունը դիմել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե՝ ակնկալելով համաձայնություն կատարվող փոփոխության վերաբերյալ՝ միաժամանակ տեղեկացնելով, որ վերոգրյալ փոփոխության արդյունքում հավելյալ ֆինանսական ծախսեր չեն նախատեսվում:

Կայացավ քննարկում, որի արդյունքում Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. Բավարարել «Մատենա» առաջնորդության և մասնագիտական զարգացման միջազգային դպրոց» փակ բաժնետիրական ընկերությունը դիմումը՝ «Առաջնորդության և տաղանդների կառավարում» հետբուհական կրթական ծրագիրը «Հյուրընկալության կառավարում» հետբուհական կրթական ծրագրով փոխարինելու վերաբերյալ:

2. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ս.Հակոբյան - _____

Ա.Մկրտչյան - _____

Ս.Ասլիզադյան - _____

Ս.Հովհաննիսյան - _____

Ա.Սողբաթյան - _____

Հ.Սահակյան - _____

Լ.Պետրոսյան - _____

Շ.Հովսեփյան - _____